

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԱՅ ԱՐԺԵՔՆԵՐ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱԶԼԵԱՆ

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

Յարդ՝ հայ արժեքներու լիբանանեան շարքի մեր դիմաստուները՝ վաստակ շահած և երկարամեայ ուղիի ճամբորդ դարձած դեմքերու նուիրուած էին: Բացառութիւն է Յարութիւն Ֆազլեանը, որ երիտասարդ է տակաւին և երաժշտական ասպարէզէն ներս վաստակ ապահովելով երկարամեայ ուղիէ մը չէ անցած...: Բայց, արդէ՛ն լիբանանեան առումով երաժշտական դեմք է և խօսիլ կու տայ իր մասին տեղական մամուլի մէջ (արարական, եւրոպական) հայ թերթերէն աւելի... և առաջ...: Արդարեւ, ոչ մէկ հայ մամուլ արձագանգեց երիտասարդ հայ երաժիշտին՝ Յարութիւն Ֆազլեանին երաժշտական փայլուն յաջողութեան, որ արձանագրեց ան, 20 Ապրիլ 2000-ին, Եունէսքոյի սրահը լեցուցած բազմազգ հասարակութեան մը ներկայութեան՝ Լիբանանի առաջին ազգային Orchestre Symphonique-ի իբր ղեկավար-խմբավար: Կը թուի թէ կորսնցուցած ենք լիբանանեան չափանիշով մեր ազգային արժեքներով հպարտանալու զգայնութիւնը...: Յոռի բարբի ցուցանիշ...:

Ֆրանսատառ տեղական մամուլէն՝ L'Orient-Le Jour, մէջբերում մը իբր վկայութիւն՝ լաւապէս կը ցուցնէ հայ երիտասարդ երաժիշտին նպաստը Լիբանանի երաժշտական կեանքի զարգացման և վերելքին. «Լիբանանի ազգային Symphonique Orchestre-ը, մօտ ութսուն երաժիշտներէ բաղկացած, որ Պէյրութեան երաժշտական բեմին վրայ յիշարժան երեւոյթ է, կը վայելէր ղեկավարութիւնը երիտասարդ և տիւնամիջ Յարութիւն Ֆազլեանին: Ան Եունէսքոյի պալատի հանդիսականներուն, դասական երաժշտութեան սիրահարներուն, ներկայացուց ընտրեալ յայտագիր մը, հանելի մուտնով մը, ո՛չ դիրիճ, որ կը պարփակէր Վերտիէն, Պախելն, Մոցարթէն և Տվորաբէն յօրինումներ: Գեղեցկօրէն համադրուած էր լիրիզմը, ուժգնութիւնը, յուզումն ու արտայայտչականութիւնը՝ նուագախմբային արուեստին տիրապետումով»:



Երաժշտական գետնի վրայ արդէն գեղեցիկ իրականացում մըն է ազգային Symphonique Orchestre-ի գոյութեան կոչումը՝ ինչ որ հայ երիտասարդ տաղանդի մը բոլորանուէր շանքերով և Լիբանանի ազգային երաժշտանոցի արուեստի նուիրեալ տնօրէն՝ Ղօլմիէի յղացումով և քաջալերանքով: Լիբանանի մշակութային կեանքին երաժշտական բնագաւառը նշանակալի յառաջդիմութեան հունին մէջ կը մտնէ, որ իր մշակութային վարկին միջազգային տարողութիւն կու տայ: Ընծայուած պետական հովանաւորութիւնը և հնարաւորութիւնը կը յուսադրեն ազգային Symphonique Orchestre-ին հետագայ բարձր ընթացքին հետեւողականութեան և յուսավառ ապագային հանդէպ: Կարելի չէ և ընդունելի երբեք չէ, որ Լիբանան իր նուաճած երաժշտական այս կարեւոր և հպարտացնող մակարդակէն զիջի, նահանջէ: Կը մնայ, որ ժողովուրդը իր ընդհանրութեան մէջ, բարձրացնէ երաժշտական ճաշակը, հոգեկան սնունդին կենսական պահանջքը դարձնէ Symphonique Orchestre-ի երաժշտական բարձր որակի դասական յայտագիրները և իր ներկայութեամբ և մասնակցութեամբ նպաստէ անոր զարգացման և յարատեւումին: Թեթեւ և անորակ երաժշտութեան խայտարղէտ յայտագիրները, որոնք հրապարակը գրաւած ու ողողած են, ժողովուրդը բարձրանայ դասական երաժշտութեան հոգեպարար ոլորտին և անոր շնորհած նշմարիտ վայելքին...: Չենք ստորագնահատեր ժողովրդական երաժշտութեան տեղն ու դերը, բայց դասականին արժէքը ուրիշ է, անփոխարինելի է, որուն պետական հովանաւորութեամբ ձեռնարկումը Լիբանանին ազգային պարծանքը կը կազմէ՝ մշակութային իր դիմագիծին գունագեղ ցոլացումով:

Յետ-պատերազմեան Լիբանանի խաղաղարար յաղթանակը կը կազմէ Symphonique Orchestre-ը, որուն կերտումին մէջ Յարութիւն Ֆազլեանին գործօն դերակատարութեամբ, պատիւը կ'երթայ նաեւ Լիբանանի հայ համայնքին, որ մշակութային շահախնդ և անոր բազմազգ մշակոյթի խայտաճամուկ խնամակարին:

Ո՞վ է, սակայն, Յարութիւն Ֆազլեանը, որուն վստահուեցաւ և ընծայուեցաւ Լիբանանի ազգային առաջին Symphonique Orchestre-ը ղեկավարելու պատասխանատուութիւնը և պատիւը:

Մուսնոյով լիբանանցի Յարութիւն Ֆազլեանը զաւակն է վաստակաւոր բեմադրիչ-դերասան Պերն Ֆազլեանին, որուն ընտանեկան գերագնացապէս արուեստի մթնոլորտին մէջ կազմաւորուած է իր երաժշտական հակումը, փոքր տարիքէն, երբ տան դաշնամուրին վրայ կատարած թովոսցող նախափորձերը հարթած են ուղին ապագայ երաժիշտին: Քաջալերուած են անոնք արուեստագետ հմուտին կողմէն, որ թոյլիքներ տուած է իր երաժշտական ասպարէզի ընտրութեան ծանր՝ իր ներքին կարկաչող ձայններուն ունկնդիր յանձնարարութեամբ: Տակաւին դեռահաս պատանին, 1976-ին, լիբանանեան պատերազմի բռնկումին հետեւանքով ծնողքին հետ հաստատուած է Մոնթրէալ, Գանատա՝ որ դաշնամուրի անձնական դասերու հետեւելէ ետք, վկայուած է Մոնթրէալի երաժշտական ակադեմիայէն:

Երաժշտութեամբ տարուած, երաժշտական աշխարհով կլանուած երիտասարդը՝ Յարութիւն Ֆազլեան լսած է երաժշտութեան և ի՛ր հայրենիքին կանչը և Հայաստան մեկնելով կատարելագործած է երաժշտական ուսմունքը նախ՝ Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտանոցին մէջ, ապա՝ Կոմիտասի պետական երաժշտանոցէն վկայուած՝ Օփերայի և Symphonie նուագախումբի խմբավարութեան ճիւղէն: Իր փորձառական մասնագիտութիւնը ձեռք ձգած է նախ՝ Երևանի Symphony Orchestre-ի խմբավարի որպէս օգնական, ապա՝ մասնակցութեամբ միջազգային Սէմինարներու, վայելած է փորձառական բարիքը միջազգային համբաւի տէր խմբավարներու՝ Jiri belohlavek, Georg Tintner, Milos Machnek, Charles Dutoit, Loris Tjeknavorian: Այս ցանկէն դուրս չի ձգուիր նաեւ այն հոգածութիւնը, որ Յարութիւն Ֆազլեան վայելած է Փրոֆ. Տիկ. Արկենդիան Պոզնանի կողմէ: Իր երաժշտական հասունացման և կազմաւորման դարբնոցը Երևանը եղած է, անոր երաժիշտ տաղանդներու փաղանգով, երաժշտական ձեռնարկներու բարձրորակ յայտագիրներով թէ ընդհանրապէս արուեստի մթնոլորտով: Հանդիպման մը ընթացքին, ուրիշ էր կ'ըսէ, այն հոգեպէս և ճաշակով հարըստացնող մթնոլորտը, որ կը տիրէր Խ. Հայաստանի օրերուն: Երաժշտութիւնը ոչ միայն պետական քաղաքականութեան ընձեռած բարիքները կը վայելէր, այլեւ՝ ժողո-

վուրդը անոր հոգեկան և գեղագիտական պահանջքը զգալով կ'ապրէր երաժշտական աշխարհի ոգեկան սնունդով:

Նախքան Լիբանան՝ իր ծննդավայրը վերադարձը և երաժշտական կեանքէն ներս մուտքը, յաջողութեամբ անցած է միջազգային երաժշտական ֆնոթիւններու բովէն՝ տալով համերգներ Հայաստանէն սկսելով՝ Ռուսաստան, Գանատա, Միացեալ Նահանգներ և եւրոպական երկիրներ և շահած անուանի մրցանակներ՝ [“ Janacek, Dvorak” international Conductors Competition and Won Second Prize, Special Jury Prize for best interpretation of Dvorak’s “ Carnival Overture and Symphony No. 8]:

Մարդ էակին և ի մասնաւորի արուեստագետին ծննդավայրին օդն ու շուրջը հարգատրութեան երանգաւորումով դէպի իրեն կը քաշեն, կ'առնեն կարօտախտի բնական մղումներով: Հինգ տարիներէ ի վեր Լիբանան է Յարութիւն Ֆազլեան և արդէ՛ն շաղուած է լիբանանեան երաժշտական կեանքին հետ, անոր վերելքին ձգտող քաղաքացիական հաւատարմութեամբ և ներշնչեալ եռանդով: «Հորովի» Հայկական երգչախումբի տնօրէնն ու խմբավարն է. Լիբանանի ազգային Symphony Orchestra-ի ղեկավար և Եունէսքոյի պետական Յանձնախումբի Լիբանանը ներկայացնող միակ հայ ներկայացուցիչն է. Լիբանանի Ազգային երաժշտանոցի փրոֆ.ներէն է:

Նախապէս Հ. Ե. Ը. ի երգչախումբը վարելէ ետք, այսօր իր անձնական «Հորովի» երգչախումբով ոչ միայն լիբանանահայերը հաղորդակից կը դարձնէ հայ երգի ազգային բոլորին ու թոյրին, այլեւ՝ լիբանանեան յայտագիրներուն ընդգրկուած է «Հորովի» շնորհիւ իր ճարտար յատկութիւններուն և լիբանանեան մշակոյթին համարկընելու առո՛ղջ կեցուածքին:

Մեզի համար, սակայն, 20 Ապրիլի Եունէսքոյի երեկոն, որ աւագ շաբթուան զուգահիւրդ սուրբ օր մըն էր, սրբազան երաժշտութեան դասական ենթահողով, յատկանշուեցաւ եռեակ իմաստներով:

Լիբանան կ'ունենար իր առաջին Symphonique Orchestre-ը: Լիբանանի առաջին Symphonique Orchestre-ի ղեկավարը հայ տաղանդաւոր երաժիշտ մըն էր:

Հայ երիտասարդ երաժիշտին՝ Յարութիւն Ֆազլեանին խմբավարի նկուն նկատուող դասական երաժշտութեան անխառն և բացառիկ վայելքը կ'ապրէինք ազգային հպարտութեամբ համակուած: